# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ν ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ 04/21

ք. Գյումրի «18» փետրվարի 2021թ.

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Ք. Ահարոնյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Հակոբյան Կարապետյան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Սուրեն Կարապետյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են __10__ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __20__ օրից ավելի,

2.1.8 Չնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 286450 /երկու հարյուր ութսունվեց հազար չորս հարյուր հիսուն/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության ____2____ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ____2____ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և

---

[20] Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

---

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

«Գյումրու թիվ 4 արհեստագործական
պետական ուսումնարան» ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05536355
Հ/Հ 9002180005872950
Գյումրիի գանձապետական բաժանմունք

_______________
(ստորագրություն)
Տնօրեն Ք. Միսրոնյան
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«Հակոբյան Կարապետյան» ՍՊԸ

ք. Գյումրի Ռուսթավելու 22
ՀՎՀՀ 05537512
Հ/Հ 163128019631
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Գյումրու մ/ճ

_______________
(ստորագրություն)
Տնօրեն [illegible] Կարապետյան
Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
« 18» փետրվարի 2021 թ. կնքված
ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ 04/21 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| համարը | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակն ըստ ամիսների | | | | |
| | | | | | | | | | 2 | 4 | 5 | 8 | 10 |
| | | **Անձնական խնամքի պարագաներ** | | | | | | | | | | | |
| 1 | 33711300 | Բալզամ | Մազերը սնուցող, փափկեցնող միջոց | լիտր | 1500 | 3000 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 1 | 0,5 | 0,5 |
| 2 | 33711300 | Լաք 400մլ | Սանրվածքը ամրացնելու նյութ 400մլ | բալոն | 1500 | 6000 | 4 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | 1 | 2 | |
| 3 | 33711300 | Ռսկ 150մգ | Սանրվածքը ամրացնելու նյութ 150մլ | տուփ | 2000 | 8000 | 4 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | 1 | 1 | 1 |
| 4 | 33711300 | Մուս 300մլ | Մազին հաղորդում է փայլ և գերամուր ֆիկսացիա 300մլ | սրվակ | 1500 | 6000 | 4 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | 1 | 2 | |
| 5 | 33721800 | Անտեսանելի ամրակ (невидимки) | Տուփի մեջ 200հատ | տուփ | 800 | 4800 | 6 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | 1 | 1 | 3 |
| 6 | 33721800 | Անտեսանելի ամրակ /շպիլկա/ | Տուփի մեջ 150հատ | տուփ | 600 | 3000 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | 1 | | 3 |
| 7 | 33721800 | Մազի ռեզին | Մազի էլաստիկ ժապավեն,տուփի մեջ 100 հատ | տուփ | 100 | 400 | 4 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | 1 | 1 | 1 |
| 8 | 33711300 | Վզնոց-անձեռոցիկ | Սպիտակ ծալքավոր թղթից,1հատը-10-12սմ երկարությամբ, 5-6սմ լայն. կլոր փաթաթված | տուփ | 2000 | 6000 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 1 | 1 |
| 9 | 33711300 | Մազերը գունաթափող փոշի /Սուպրա/ 500գ | Սպիտակ փոշի, մազերի գունաթող միջոց | կգ | 3000 | 3000 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | | |
| 10 | 33711300 | Ձեռնոց պոլիէթիլենային /100հատ/ | Պոլիէթիլենային, 100հատ. | տուփ | 500 | 500 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | | |
| 11 | 33711310 | Փրփրօճառ 5լ | Հիգիենիկ լվացող միջոց, բոլոր տեսակի մազերի համար | հատ | 6000 | 12000 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 1 | |
| 12 | 33711300 | Օքսիդանտ 6% | 6%,/20vol./հեղուկ ջրածնի գերօքսիդ | հատ | 2500 | 2500 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | | |
| 13 | 33711300 | Օքսիդանտ 9% | 9%/30vol./հեղուկ ջրածնի գերօքսիդ | լիտր | 2500 | 2500 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 14 | 33711300 | Օքսիդանտ 12% | 12%./40vol./հեղուկ ջրածնի գերօքսիդ | լիտր | 2500 | 2500 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | | |
| 15 | 33711300 | Մազերի դիմակ 500մգ | Մածուծիկ նյութ, մազի վերականգնման համար 500մգ | լիտր | 1500 | 3000 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 1 | |
| 16 | 33711300 | Գլխամաշկի դիմակ 200մգ | Մածուծիկ նյութ, գլխամաշկի բուժման համար 200մգ | տուփ | 3500 | 10500 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 1 | 1 |
| 17 | 33711320 | Սանրեր հարդարման համար N 3 | Կլոր, սև գույնի կամ սպիտակ կերամիկապատ N3 | հատ | 3500 | 10500 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 1 | 1 | 1 |
| 18 | 33711320 | Սանրեր հարդարման համար N 4 | Կլոր, սև գույնի կամ սպիտակ կերամիկապատ N4 | հատ | 4000 | 12000 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 1 | 1 |
| 19 | 33711320 | Լայն ատամներով սանր | Պլաստմասե,ատամների լայն. 1սմ | հատ | 700 | 2800 | 4 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 1 | 2 |
| 20 | 33711320 | Սանրերի հավաքածու /7հատ/ | Սանրեր 7 հատ, տարբեր չափերի և ձևերի | հավաք. | 5000 | 15000 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 1 | 1 |
| 21 | 33711320 | Արմատի երկկողմանի սանր | Ատամների երկար. 1սմ և 2 սմ, երկկողմանի | հատ | 800 | 4000 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 2 | 2 |
| 22 | 33711320 | Սանրեր հարդարման համար N 2 | Կլոր, սև գույնի կամ սպիտակ կերամիկապատ N 2 | հատ | 3000 | 9000 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 2 | |
| 23 | 33721800 | Մազակալներ /уточки/ | Երկարությունը 12սմ | հատ | 250 | 1250 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 2 | 2 |
| 24 | 33711320 | Սանր կտրվածքի | Համակցված սանր, սև, երկ. 16սմ.,լայն.2,5սմ | հատ | 800 | 1600 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 1 | |
| | | Ընդամենը | | | | 129850 | | | | | | | |
| | | **Մասնագիտական հագուստ , պարագաներ** | | | | | | | | | | | |
| 25 | 18110000 | Թիկնոց (պոլիէթիլեն ային, ներկի) 50հատ | Թափանցիկ՝ մեկանգամյա օգտագործման ուսապավան 50 հատ | տուփ | 1500 | 3000 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | | 1 |
| 26 | 18110000 | Թիկնոց (կտրվածքի) | Սահող մակերեսույթով գործվածքից կարված ուսապավան | հատ | 2000 | 6000 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 1 | 1 |
| | | Ընդամենը | | | | **9000** | | | | | | | |
| | | **Կահավորանք** | | | | | | | | | | | |
| 27 | 39221270 | Պլաստմասե տարա | Պլաստմասայից, կափարիչով Ф45սմ, բարձր.30սմ | հատ | 2500 | 2500 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 1 | | |
| 28 | 39224560 | Փայլաթիթեղ /վարսավիրական/ | Լայն.12սմ, 100մ, հաստ. խտությունը 15 | հատ | 2500 | 5000 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | | 1 |
| 29 | 39221270 | Հեղուկացիր /ցրցան/ | Մազերը խոնավացնելու համար նախատեսված գործիք | հատ | 2500 | 5000 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 1 | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 30 | 39241240 | Մկրատ (կտրվածքի) | Բաղկացած է երկու թևերից և բռնակներից: Բռնակները շրջանաձև: Թևերը միացվ են կենտրոնական միացումով, շեղբերը սրածայր են շեղբերը սրված: Շեղբի երկար. 5,5սմ | հատ | 14000 | 14000 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 1 | | |
| | | Ընդամենը | | | | 26500 | | | | | | | |
| | | Էլեկտրոնային կենցաղային տեխնիկա | | | | | | | | | | | |
| 31 | 39712300 | Վարսահարդարիչ 220-240վ | Վարսահարդարիչ 220-240վ | հատ | 22000 | 22000 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | | 1 | |
| | | Ընդամենը | | | | 22000 | | | | | | | |
| | | Փայտ | | | | | | | | | | | |
| 32 | 03411119 | Փայտանյութ ընկուզենի | Ընկուզենի /լայն.30 - 40սմ, հաստ. 3սմ/ ջոր՝ խոնավ ≤25% | խոր.մ | 430000 | 8600 | 0,02 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 0,02 | | | |
| 33 | 03411119 | Փայտանյութ լորենի | Լորենի /լայն.30 - 40սմ, հաստ. 3սմ/ ջոր՝ խոնավ ≤25% | խոր.մ | 170000 | 42500 | 0,25 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 0,3 | | | |
| 34 | 03411119 | Փայտանյութ տանձենի | տանձենի /լայն.30 -40սմ, հաստ. 3սմ/ ջոր՝խոնավ≤25% | խոր.մ | 320000 | 48000 | 0,15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 0,2 | | | |
| | | Ընդամենը | | | | 99100 | | | | | | | |
| | | Ընդամենը | | | | 286450 | | | | | | | |

Մատակարարման ժամկետը. Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո առնվազն 7 աշխատանքային օրվա ընթացքում :

**ԳՆՈՐԴ**

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05536355
Հ/Հ 900218000587295O
Գյումրու գանձապետական բաժանմունք

(ստորագրություն)
Տնօրեն՝ Բ. Ահարոնյան
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«Հակոբյան-Կարապետյան» ՍՊԸ

ք. Գյումրի Ռուսթավելու 22
ՀՎՀՀ 05537512
Հ/Հ 163128019631
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Գյումրու մ/ճ

(ստորագրություն)
Տնօրեն՝ [illegible]յան
Կ.Տ.

Հավելված N 2
« 18» փետրվարի 2021 թ. կնքված
ԳԹԱ4-ՄԱ-ԱՊՁԲ 04/21 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| համարը | միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | որոնց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | Հունվար | Փետրվար [illegible] | Մարտ [illegible] | Ապրիլ [illegible] | Մայիս [illegible] | Հունիս [illegible] | Հուլիս [illegible] | Օգոստոս [illegible] | Սեպտեմբեր [illegible] | Հոկտեմբեր [illegible] | Նոյեմբեր [illegible] | Դեկտեմբեր | Ընդամենը |
| 1-24 | **33700000** | ***Անձնական խնամքի պարագաներ*** | | 45050 | 45050 | 45050 | 56550 | 56550 | 56550 | 101300 | 101300 | 129850 | 129850 | 129850 | 129850 |
| 25-26 | **18110000** | ***Մասնագիտական հագուստ , պարագաներ*** | | 3500 | 3500 | 3500 | 3500 | 3500 | 3500 | 5500 | 5500 | 9000 | 9000 | 9000 | 9000 |
| 27-30 | **39200000** | *Կահավորանք* | | 5000 | 5000 | 5000 | 21500 | 21500 | 21500 | 24000 | 24000 | 26500 | 26500 | 26500 | 26500 |
| 31 | **39700000** | ***Էլեկտրոնային կենցաղային տեխնիկա*** | | | | | | | | 22000 | 22000 | 22000 | 22000 | 22000 | 22000 |
| 32-34 | **03410000** | ***Փայտ*** | | | | 99100 | 99100 | 99100 | 99100 | 99100 | 99100 | 99100 | 99100 | 99100 | 99100 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05536355
Հ/Հ 900218000587295О
Գյումրիի գանձապետական բաժանմունք

(ստորագրություն)
Տնօրեն՝ Բ. Աթառոնյան
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«Հակոբյան-Կարապետյան» ՍՊԸ

ք. Գյումրի Ռուսթավելու 22
ՀՎՀՀ 05537512
Հ/Հ 163128019631
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Գյումրու մ/ճ

(ստորագրություն)
Տնօրեն՝ Ա. Կարապետյան
Կ.Տ.

Պայմանագրի կողմ ______________________ ______________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ______________________

Պատվիրատու ______________________ ______________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ______________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«18» փետրվարի 2021 թ. կնքված*
*ԳՈՒԿ-ՄԱ-ԱՊՁԲ 04/21 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ____________________
Գնորդի անվանումը — Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ________________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը — պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________________
ազգանուն, անուն

______________________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն

Հավելված N 4
«18» փետրվարի 2021 թ. կնքված
ԳՈՒ4-ՍԱ-ԱՊՁԲ 04/21 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ
«Հակոբյան-Կարապետյան»ՍՊԸ
ք. Գյումրի Ճուղթավելու 22
հ/հ163128019631
«Հայէկոնոմբանկ»ԲԲԸԳյումրու մ/ճ
ՀՎՀՀ05537512
տնօրեն
________Ս. Կարապետյան

Պատվիրատու
«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
հհ900218000587295О
Գյումրիիգանձապետականբաժանմունք
ՀՎՀՀ05536355
Տնօրեն
________Ք. Ահարոնյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«22» «փետրվարի» 2021 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագիր**

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «18» «փետրվարի» 2021թ.

Պայմանագրի համարը՝ ԳՈՒ4-ՍԱ-ԱՊՁԲ 04/21

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով «22» «փետրվարի»2021թ. դուրս գրված NP3294061815 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարվածապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1. | Լաք 400մլ | Լաք 400մլ | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 1.50 | 31.05.2021 |
| 2. | Ռսկ 150մգ | Մանրվածքը ամրացնելու նյութ 150մլ | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 2.00 | 31.05.2021 |
| 3. | Մուս 300մլ | Մազին հաղորդում է փայլ և գերամուր ֆիկսացիա 300մլ | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 1.50 | 31.05.2021 |
| 4. | Անտեսանելի ամրակ (невидимки) | Տուփի մեջ 200հատ | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 0.80 | 31.05.2021 |
| 5. | Անտեսանելի ամրակ /շպիլկա/ | Տուփի մեջ 150հատ | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 0.60 | 31.05.2021 |
| 6. | Մազի ռեզին | Մազի էլաստիկ ժապավեն,տուփի մեջ 100 հատ | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 0.10 | 31.05.2021 |
| 7. | Վզնոց անձեռոցիկ | Սպիտակ ծալքավոր | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 2.00 | 31.05.2021 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | թղթից,1հատը-10-12սմ երկարությամբ, 5-6սմ լայնությամբ կլոր փաթաթված | | | | | | |
| 8. | Մազերը գունաթափող փոշի /Սուպրա/ 500գ | Սպիտակ փոշի, մազերի գունաթող միջոց | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 3.00 | 31.05.2021 |
| 9. | Ձեռնոց պոլիէթիլենային /100հատ/ | Պոլիէթիլենայի ն, 100հատ, | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 0.50 | 31.05.2021 |
| 10. | Փրփրոճառ 5լ | Հիգիենիկ լվացող միջոց, բոլոր տեսակի մազերի համար | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 6.00 | 31.05.2021 |
| 11. | Փայլաթիթեղ /վարսավիրական/ | Լայն.12սմ, 100մ, հաստ. խտությունը 15 | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 2.50 | 31.05.2021 |
| 12. | Օքսիդանտ 6% | 6%,/20vol./հեղու կ ջրածնի գերօքսիդ | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 2.50 | 31.05.2021 |
| 13. | Օքսիդանտ 9% | 9%/30vol./հեղու կ ջրածնի գերօքսիդ | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 2.50 | 31.05.2021 |
| 14. | Օքսիդանտ 12% | 12%,/40vol./հեղ ուկ ջրածնի գերօքսիդ | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 2.50 | 31.05.2021 |
| 15. | Մազերի դիմակ 500մգ | Մածուծիկ նյութ, մազի վերականգնմա ն համար 500մգ | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 1.50 | 31.05.2021 |
| 16. | Գլխամաշկի դիմակ 200մգ | Մածուծիկ նյութ, գլխամաշկի բուժման համար 200մգ | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 3.50 | 31.05.2021 |
| 17. | Սանրեր հարդարման համար N 4 | Կլոր, սև գույնի կամ սպիտակ կերամիկապա տ N4 | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 4.00 | 31.05.2021 |
| 18. | Թիկնոց (պոլիէթիլենային, ներկի) 50հատ | Թափանցիկ՝ մեկանգամյա օգտագործման ուսասվան 50 հատ | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 1.50 | 31.05.2021 |
| 19. | Հեղուկացիր /ջրցան/ | Մազերը խոնավացնելու համար նախատեսված սարք | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 2.50 | 31.05.2021 |
| 20. | Լայն ատամներով | Պլաստմասե,ա | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 0.70 | 31.05.2021 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | սանր | տամների լայն. 1սմ | | | | | | |
| 21. | Սանրերի հավաքածու /7հատ/ | Սանրեր 7 հատ, տարբեր չափերի և ձևերի | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 5.00 | 31.05.2021 |
| 22. | Արմատի երկկողմանի սանր | Ատամների երկար. 1սմ և 2 սմ, երկկողմանի | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 0.80 | 31.05.2021 |
| 23. | Սանրեր հարդարման համար N 2 | Կլոր, սև գույնի կամ սպիտակ կերամիկապատ N 2 | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 3.00 | 31.05.2021 |
| 24. | Մազակալներ /уточки/ | Երկարությունը 12սմ | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 0.25 | 31.05.2021 |
| 25. | Սանր կտրվածքի | Համակցված սանր, սև, երկ. 16սմ,լայն.2,5սմ | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 0.80 | 31.05.2021 |
| 26. | Թիկնոց (կտրվածքի) | Սահող մակերևույթով գործվածքից կարված ուսասվան | 1 | 1 | 26.02.2021 | 22.02.2021 | 2.00 | 31.05.2021 |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

Ս. Կարապետյան

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 22 | Փետրվար | 2021 թ. | Բ | 3294061815 |
| [4] Առաքման ամսաթիվ | | | | |
| 22 | Փետրվար | 2021 թ. | | |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| | Պայմանագիր | |
|---|---|---|
| | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| | | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

| Արտադրանք, ապրանք առաքող անձի | | |
|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 5 5 3 7 5 1 2 | |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | |
| [10] Անվանումը | «ՀԱԿՈԲՅԱՆ-ԿԱՐԱՊԵՏՅԱՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) | |
| [11] Բանկային տվյալները | Հայէկոնոմբանկ Գյումրու մ/ճ | N 163128019631 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ Ռուսթավելու 22 | |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ԳՅՈՒՄՐԻ Ռուսթավելու 22 | |
| [14] Լրացուցիչ տվյալներ | | |

| Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի | | |
|---|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)<br>(ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 5 5 3 6 3 5 5 | |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) | |
| [18] Բանկային տվյալները | Գյումրիի գանձապետական բաժանմունք | N 9002180005872950 |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ԳՅՈՒՄՐԻ Անի թաղ. 11փ. 5 2 | |
| [20] Լրացուցիչ տվյալներ | | |
| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն | |
| | Լիազորագիր — Համար | |
| | Լիազորագիր — Ամսաթիվ | |
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԳՅՈՒՄՐԻ Անի Թաղ. 11 Փող. 5 2 | |

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Տարա | Այդ թվում՝ բնապ. հարկ | Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Լաք 400մլ | բալոն | 1 | 1500 | | 1500 | | | |
| 2 | Ռսկ 150մգ | տուփ | 1 | 2000 | | 2000 | | | |
| 3 | Մուս 300մլ | սրվակ | 1 | 1500 | | 1500 | | | |
| 4 | Անտեսանելի ամրակ (невидимки) | տուփ | 1 | 800 | | 800 | | | |
| 5 | Անտեսանելի ամրակ /շպիլկա/ | տուփ | 1 | 600 | | 600 | | | |
| 6 | Մազի ռեզին | տուփ | 1 | 100 | | 100 | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | Վզնոց-անձեռոցիկ | տուփ | 1 | 2000 | | 2000 | | | |
| 8 | Մազերը գունաթափող փոշի /Սուպրա/ 500գ | կգ | 1 | 3000 | | 3000 | | | |
| 9 | Ձեռնոց պոլիէթիլենային /100հատ/ | տուփ | 1 | 500 | | 500 | | | |
| 10 | Փրփրօճառ 5լ | հատ | 1 | 6000 | | 6000 | | | |
| 11 | Փայլաթիթեղ /վարսավիրական/ | հատ | 1 | 2500 | | 2500 | | | |
| 12 | Օքսիդանտ 6% | լիտր | 1 | 2500 | | 2500 | | | |
| 13 | Օքսիդանտ 9% | լիտր | 1 | 2500 | | 2500 | | | |
| 14 | Օքսիդանտ 12% | լիտր | 1 | 2500 | | 2500 | | | |
| 15 | Մազերի դիմակ 500մգ | լիտր | 1 | 1500 | | 1500 | | | |
| 16 | Գլխամաշկի դիմակ 200մգ | տուփ | 1 | 3500 | | 3500 | | | |
| 17 | Սանրեր հարդարման համար N 4 | հատ | 1 | 4000 | | 4000 | | | |
| 18 | Թիկնոց (պոլիէթիլենային, ներկի) 50հատ | տուփ | 1 | 1500 | | 1500 | | | |
| 19 | Հեղուկացիր /ջրցան/ | հատ | 1 | 2500 | | 2500 | | | |
| 20 | Լայն ատամներով սանր | հատ | 1 | 700 | | 700 | | | |
| 21 | Սանրերի հավաքածու /7հատ/ | հավաք. | 1 | 5000 | | 5000 | | | |
| 22 | Արմատի երկկողմանի սանր | հատ | 1 | 800 | | 800 | | | |
| 23 | Սանրեր հարդարման համար N 2 | հատ | 1 | 3000 | | 3000 | | | |
| 24 | Մազակալներ /уточки/ | հատ | 1 | 250 | | 250 | | | |
| 25 | Սանր կտրվածքի | հատ | 1 | 800 | | 800 | | | |
| 26 | Թիկնոց (կտրվածքի) | հատ | 1 | 2000 | | 2000 | | | |
| **Ընդամենը** | | | | | | 53550 | X | | |

Առաքող՝ KARAPETYAN SUREN 1801850151
(անունը, ազգանունը)

Ստացող AHARONYAN KNARIK 5708640316
(անունը, ազգանունը)

22/02/2021 13:40:59

22/02/2021 17:43:37